**ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կառավարման պահեստային կետի համար անհրաժեշտ գույքի և սարքավորումների ցանկ**

| Հ/Հ | Անվանում | Քանակ | Գին (ՀՀ դրամ) | Ընդհանուր գին (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|
| 1. | Ղեկավարի աշխատասեղան | 1 | 350.000 | 350.000 |
| 2. | Ղեկավարի աթոռ | 1 | 150.000 | 150.000 |
| 3. | Բազմոց (ղեկավարի աշխատասենյակի համար) | 1 | 300.000 | 300.000 |
| 4. | Բժշկական տապչան | 1 | 100.000 | 100.000 |
| 5. | Աթոռ | 20 | 35.000 | 700.000 |
| 6. | Սեղան | 5 | 34.500 | 172.500 |
| 7. | Նոութբուք | 5 | 350.000 | 1.750.000 |
| 8. | Տպիչ | 2 | 90.000 | 180.000 |
| 9. | Հեռախոս թվային | 1 | 95.000 | 95.000 |
| 10. | Դոզաչափ | 1 | 700.000 | 700.000 |
| 11. | Պահարան | 3 | 100.000 | 300.000 |
| 12. | Զգեստի կախիչ | 6 | 23100 | 138.600 |
| 13. | Պատի կախիչ | 2 | 2.000 | 4.000 |
| 14. | Ճաղավանդակ՝ գաղտնի մասի դռան համար | 1 | 110.000 | 110.000 |
| Ընդամենը | | | | 5.050.100 |

**Հիմնավորում**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կառավարման պահեստային կետը (այսուհետ՝ ԿՊԿ) ծառայում է ռազմական դրության ժամանակ կառավարման Նախարարության ղեկավարման անընդհատությունը ապահովելու համար: Այս համատեքստում կարևոր է աշխատանքային բարենպաստ պայմանների ստեղծումը, այդ թվում նաև գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի և սարքավորումների ձեռքբերումը:

Նախարարության ԿՊԿ-ում 2022 թվականի համար նախատեսված պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են վերանորոգման աշխատանքներ, այդ թվում արտաքին ծածկույթի ամբողջական փոխարինում ջրակայուն իզոգամ շերտով, ներքին հարդարում, ղեկավարի աշխատասենյակի առանձնացում, ջեռուցման համակարգի ստեղծում և օդափոխության փիլտրերի փոխարինում:

Ռազմական դրության ժամանակ, անհրաժեշտության դեպքում Նախարարության գործունեության իրականացումն ապահովելու նպատակով, նպատակահարմար է ձեռք բերել անհրաժեշտ գույք և տեխնիկա, այդ թվում, ղեկավարի աշխատասենյակը կահավորել անհրաժեշտ գույքով և սարքավորումներով (հեռախոս և նոութբուք), աշխատանքային խմբերում ընդգրկված անձնակազմի համար ձեռք բերել համապատասխան գույք և համակարգչային տեխնիկա, գաղտնի մասի սենյակի դուռը ճաղավանդակել՝ անվտանգության նկատառումներից, ինչպես նաև ՀՀ կառավարության համապատասխան որոշման պահանջներից ելնելով, բուժկետի կահավորման համար ձեռք բերել բժշկական պայուսակ, ինչպես նաև ձեռք բերել դոզաչափական սարք, որպես քաղաքացիական պաշտպանության գույք:

ԿՊԿ-ի կահավորման նպատակով մինչև այժմ նախատեսվում էր համապատասխան գույքը տեղափոխել «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ից, սակայն պարզ է, որ այն գույքը և սարքավորումները, որոնք պետք է տեղափոխվեն, նախատեսված են կազմակերպության որոշակի թվով աշխատակիցների գործունեության համար: